«ԱՅՈ»-Ն ՍԿՍՈՒՄ Է COVID-19-Ի ԱՐՏԱԿԱՐԳ ԴՐԱՄԱՀԱՎԱՔԻ ԱՐՇԱՎ

Մենք քաջալերվում ենք այն համայնքային բարձր գիտակցությամբ, որը տիրում է Հայաստանում այս դժվարին ժամանակներում, եւ ինչը մեզ ստիպում է դառնալ ավելի միասնական: Մենք տեսնում ենք, թե ինչպես են մեր հայրենակիցները միմյանց հորդորում #մնատանը հանուն տարեցների անվտանգության: Տեսնում ենք, թե ինչպես են օգնության ձեռք մեկնում ֆինանսապես տուժածներին և պատշգամբներից ծափահարում Հայաստանի խիզախ բուժաշխատողներին, որոնք չեն դադարում իրենց կյանքը վտանգել համաճարակի տարածման դեմ պայքարում:

Բայց այն, որ մենք «ԱՅՈ»-ի թիմի անդամներով ևս ինքնամեկուսացած ենք մեր տներում, չի նշանակում, որ դադարել ենք մեր բնականոն աշխատանքը, ավելին, մենք նույնպես միանում ենք COVID-19-ի հետևանքով ծառացած խնդիրների լուծման ընդհանուր գործին:
Մենք արդեն համագործակցում ենք խոցելի խմբերին աջակցող շահույթ չհետապնդող կազմակերպությունների եւ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության հետ, որպեսզի հասկանանք, թե ինչպես մեր հավաքական ռեսուրսները կարող ենք լավագույնս ուղղել խնդիրների լուծմանը: Նրանք ջանասիրաբար աշխատում են՝ սննդամթերքով ծանրոցներ և հիգիենայի պարագաներ հասցնելու մեր հանրության ամենախոցելի խմբերին այս ճգնաժամային պայմաններում: Սակայն, ցավոք, նրանք չեն կարող օգնության հասնել բոլորին, և անհրաժեշտ է բազմապատկել աջակցությունը:

Այս նպատակով մենք մեկնարկում ենք COVID-19-ի արտակարգ իրավիճակի աջակցության դրամահավաքի արշավը, որի նպատակն է օգնության հասնել կարիքի մեջ հայտնվածներին կամ հատուկ օգնության կարիք ունեցողներին:

Մենք նաև որոշեցինք այս արշավի համար չսահմանել գումարների հավաքագրման նպատակակետ, քանի որ այս ժամանակահատվածում յուրաքանչյուր աջակցություն կգտնի իր կարիքավորին:

Սա նաև չի նշանակում, որ մենք դադարեցնում ենք մեր **«Շուհել»** ծրագիրը. հանգանակությունները ևս շարունակվում են:

Հայաստանի առողջապահության աշխատակիցները տքնում են առանց դադարի՝ հաղթահարելու համաճարակը: Նրանց ծառայության ամենաբարձր երախտագիտությունը կարող է լինել մեր մասնակցությունը ամենակարիքավորներին ցուցաբերվող աջակցության ջանքերին: